

ՀԵՍՈՒԻ ԳԻՐՁ

Չորրորդ հաղորդում

**Այն բանի անհրաժեշտությունը,
որ Աստծու մարդիկ վնատրեն Տիրոջ ցուցումը և
ունենան Տիրոջ ներկայությունը, որպեսզի ի ցույց դնեն
Նրա հաղթանակը՝ Նրա Մարմինը կառուցելու և
Նրա բագավորությունը տարածելու համար**

Գրվածքների ընթերցում. Մտք 1:5, Հս 6:22-26, 7:1-6, 10-15, 20-21, 9:14

- I. Երբ երկու լրտեսները Երիքով եկան, Ռահարը (որը թե՛ պոռնիկ էր, թե՛ քանանացի) նրանց հետ շփման մեջ մտավ և պատրաստակամությամբ ընդունեց նրանց, թաքցրեց նրանց և նրանց օգնեց ազատվելու՝ իր հավատքից բխող գործողություններ կատարելով (Հս 2:1թ-7, 15-16, 22, Հկք 2:25). նա հավատաց Խորայելի Աստծուն և հոչակեց. «Եհովան՝ ձեր Աստված, Նա վերևում՝ երկնքում, և ցածում՝ երկրի վրա, եղող Աստված է» (Հս 2:11թ).
- A. Եհովան պոռնիկ Ռահարին տվեց Հետուին՝ երկիրը ձեռք բերելու համար. Աստծու հանդեպ իր հավատքի շնորհիվ նա «չկործանվեց նրանց հետ, ովքեր անհնազանդ էին» (Եբք 11:31). նա շրջվեց դեպի Խորայելն ու նրանց Աստված, և նա ապավինեց Նրան ու Նրա ժողովրդին (Հս 2:12-13):
- B. Ռահարի և նրա տան փրկվելու նշանն այն էր, որ նա ալ կարմիր պարան կապեց իր տան պատուհանի մեջ (Խխ. 18, 21). պատուհանի մեջ կապած ալ կարմիր պարանը Քրիստոսի փրկագնող արյունը բացահայտորեն դավանելու նախատիպն է (Ա Պտ 1:18-19). նա հավատաց, որ այս նշանով նա և իր տունը կազատվեն:
- C. Թեև Ռահարը Երիքովում՝ Աստծուց հավիտյան անիծված մի վայրում (6:26), ապրող դատապարտված քանանացի և անառակ կին էր (Հս 2:1), այն բանից հետո, երբ ինքը շրջվեց Աստծու և Նրա ժողովրդի կողմը (6:22-23, Եբք 11:31), ամուսնացավ Սաղմոնի հետ (Մտք 1:5), ով Հուդայի՝ Խորայելի առաջատար ցեղի առաջնորդներից մեկի որդին էր (Ա Մնց 2:10-11) և, հավանաբար, երկու լրտեսներից մեկը. այնուհետև նա ծնեց Բոռսին՝ մի բարեպաշտ մարդու, որից էլ սերվեց Քրիստոսը, և նա կապվեց Քրիստոսի հետ Նրա մարմնացման մեջ՝ Աստծու հավիտենական տնտեսությունն իրականացնելու համար (Մտք 1:5):
- D. Սա ցույց է տալիս, որ եթե մենք, անկախ մեր անցյալից, շրջվենք Աստծու և Նրա ժողովրդի կողմը և միանանք Աստծու ժողովրդին պատկանող պատշաճ անձի (ոչ թե ֆիզիկական առումով, այլ հոգևոր), ապա պատշաճ պտուղ կրերենք և կմասնակցենք Քրիստոսի առաջնեկության իրավունքի վայելքին՝ Ելց 24:13, 33:11, Թմզ 27:18, Եբկ Օր 34:9, Հս 1:1, Դ Թմզ 2:2-15, Փլա 2:19-23, Ա Կրք 4:17:
- II. Երիքովը ոչնչացնելուց հետո Խորայելը պարտվեց Գայիի մոտ. մոտենալով Երիքովին՝ Հետուն, ըստ Աստծու տնտեսության, լրտեսներին ուղարկեց ոչ թե

ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄ-ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

պատերազմելու, այլ Ռահարին ձեռք բերելու համար. բայց Գայիի մոտ, քանի որ Խսրայելը կորցրել էր Տիրոջ ներկայությունը (Հս 7:12գ), Հետուն լրտեսներին ուղարկեց մարտնչելու համար (Խս. 2-3).

- Ա. Գայիի մասին լրտեսների գեկույցը Հետուին նշանակում է, որ Խսրայելը մի կողմ էր քողել Աստծուն. Աստծուն հարցնելու փոխարեն, թե ինչպես գործեն Գայիի դեմ, նրանք մոռացել էին Աստծուն և հաշվի էին առնում միայն իրենց. այդ ժամանակ նրանք մեկ չէին Աստծու հետ, այլ գործում էին ինքնուրույն՝ առանց Տիրոջ ցուցումը փնտրելու և առանց Տիրոջ ներկայությունն ունենալու. Խսրայելը զատվեց Աստծուց իր մեղքի պատճառով՝ խս. 1-5, 12գ.
1. Գայիի մոտ Խսրայելի պարտության թաքնված պատճառն այն էր, որ նրանք կորցրել էին Աստծու ներկայությունն ու այլևս մեկ չէին Աստծու հետ. այս պարտությունից հետո Հետուն յուրացրեց Տապանակի առջև Տիրոջ հետ մնալու դասը (Խս. 6). ի վերջո Տերը եկավ նրա հետ խոսելու և նրան ասաց, թե ինչ անի (Խս. 10-15):
 2. Հոգևոր դասը, որ պետք է յուրացնենք այս պատումից, այն է, որ մենք՝ Աստծու ժողովուրդը, պետք է միշտ մեկ լինենք մեր Աստծու հետ, ով ոչ միայն մեր միջավայրում է, այլև մեր մեջ է, և ով մեզ դարձնում է Աստծու հետ եղող մարդիկ՝ Աստվածամարդիկ:
 3. Որպես Աստվածամարդիկ՝ մենք պետք է կիրարկենք Տիրոջ հետ մեկ լինելը, Նրա հետ քայլելը, Նրա հետ ապրելը և Նրա հետ գոյություն ունենալը. սա որպես քրիստոնյա քայլելու, որպես Աստծու զավակ մարտնչելու և Քրիստոսի Մարմինը կառուցելու ճանապարհն է:
 4. Եթե ունենք Տիրոջ ներկայությունը, տարրեր բաների առնչությամբ ունենք իմաստություն, խորաթափանցություն, կանխատեսում և ներքին գիտություն. Տիրոջ ներկայությունն ամեն ինչ է մեզ համար՝ Բ Կրթ 2:10, 4:6-7, Գլու 5:25, Ծնդ 5:22-24, Եփ 11:5-6:
- Բ. Եթե ուզում ենք մտնել համարովանդակ Քրիստոսի՝ որպես բարի երկրի իրականության մեջ, տիրել ու վայելել Նրան, պետք է դա անենք Տիրոջ ներկայության ճանապարհով. Տերը Մովսեսին խոստացել էր. «Իմ ներկայությունը քեզ հետ կգնա, և քեզ հանգիստ կտամ» (Ելց 33:14). Աստծու ներկայությունը Նրա ճանապարհն է, այն «քարտեզը», որն Իր մարդկանց ցույց է տալիս, թե որ ճանապարհով գնան.
1. Որպեսզի մենք լիովին ձեռք բերենք ու տիրենք Քրիստոսին՝ որպես Աստծու կառույցի համար եղող համարովանդակ երկրի, մենք պետք է կառչենք հետևյալ սկզբունքին. Աստծու ներկայությունը չափանիշ է ամեն հարցում. ինչ էլ անենք, պետք է ուշադրություն դարձնենք՝ ունե՞նք արդյոք Աստծու ներկայությունը, թե՞ ոչ. Եթե ունենք Աստծու ներկայությունը, ամեն ինչ ունենք, բայց եթե կորցնում ենք Աստծու ներկայությունը, ամեն ինչ կորցնում ենք՝ Սոր 1:23, Բ Ծնդ 4:22, Գլու 6:18, Սղմ 27:4, 8, 51:11, Բ Կրթ 2:10, Եզկ 48:35:
 2. Տիրոջ ներկայությունը՝ Տիրոջ ժախտը, կառավարող սկզբունք է. մենք

ՀԵՍՈՒԻՆ ԳԻՐՁ

պետք է սովորենք պահվել, ղեկավարվել, կառավարվել ու ուղղորդվել ոչ թե երկրորդ անձի ունեցած Նրա ներկայությամբ, այլ Տիրոջ ուղղակի, անմիջական ներկայությամբ. Նրա թանկագին ներկայությունը համարովանդակ Քրիստոսին՝ որպես կաք ու մեղք հոսեցնող բարի երկրի իրականության, տիրելու զորությունն է՝ Ել 3:8, 25:30, Երկ Օր 26:9, Եզկ 20:6:

3. «Երիտասարդ տարիքում ինձ հաղթելու, հաղթական, սուրբ և հոգևոր լինելու տարբեր ճանապարհներ էին սովորեցնում: Սակայն այդ ճանապարհներից ոչ մեկը չէր աշխատում: Ի վերջո փորձառության ավելի քան վարչունութ տարիների ընթացքում հայտնաբերեցի, որ ոչինչ չի օգնում՝ բացի Տիրոջ ներկայությունից: Նրա՝ մեզ հետ լինելն ամեն ինչ է»՝ «Հետոի գործի կենսառուսումնասիրություն», ո. էջ 58:
4. Երբ իսրայելացիները Քանանի երկիր մտան և Երիքովի հանդեպ հաղթանակ տարան, առաջին մարդը, որ մեղք գործեց, Աքարն էր. Աքարի լուրջ մեղքի խորքային, հոգևոր նշանակությունն ու դրա հանդեպ աստվածային հայացքն այն էր, որ Աքարը գեղեցիկ բարելոնյան հանդերձ ցանկացավ (Սենաարն այն տարածքն է, որն ավելի ուշ «Բարելոն» կոչվեց)՝ ձգտելով բարելավել իրեն, ավելի բարետես երևալ՝ հանուն արտաքին տեսքի՝ Հս 7:21.
 1. Անանիան ու Սափֆիրան, որոնք ստեցին Սուրբ Հոգուն, մեղանչեցին միենույն սկզբունքով. սա Բարելոնի սկզբունքն է, այսինքն՝ կեղծավորությունը՝ Գրծ 5:1-11, Հյտ 17:4, 6, Մտք 23:13-36.
 - ա. Նրանք Տիրոջը շատ չէին սիրում, բայց ուզում էին որպես Տիրոջը շատ սիրողներ երևալ. նրանք պարզապես ձևացնում էին. Աստծու զավակները պետք է ազատվեն մարդկանց առջև երեսպաշտությունից:
 - բ. Նրանք չէին կամենում ամեն քան ուրախությամբ Աստծուն զոհել, սակայն մարդկանց առջև այնպես էին վարվում, ասես ամեն քան զոհել էին. ամեն անզամ, երբ զգեստ ենք հազնում, որը չի համապատասխանում մեր իրական վիճակին, մենք Բարելոնի սկզբունքով ենք վարվում՝ 6:1-6, 15:7-8:
 2. Այն ամենը, ինչ կեղծավորությամբ է արվում՝ մարդուց փառք ստանալու նպատակով, արվում է պոռնիկի սկզբունքով, և ոչ թե հարսի սկզբունքով. կեղծ նվիրաբերումը և կեղծ հոգևորությունը մեղքեր են, իսկ ճշմարիտ երկրպագությունը հոգում և ճշմարտացիությամբ է. քող Աստված մեզ ճշմարիտ մարդիկ դարձնի՝ Հյտ 17:4-5, 19:7-9, Ղկս 12:1, Ա Կրթ 2:9-10, Բ Կրթ 2:10, 5:14-15, Հվի 4:23-24:
 3. «Կարևորն այն չէ, թե մարդն ինչպես է տեսնում. քանի որ մարդն արտաքին տեսքին է նայում, իսկ Եհովան՝ սրտին» (Ա Թգ 16:7). եթե Աստծու խոսքը մեր սրտում ամբարենք (Սղմ 119:11) և Քրիստոսին թույլ տանք Իր տունը հաստատել մեր սրտում (Եփս 3:16-17), Նա կդառնա մեր սրտի բարի գանձը, և մեր սրտի առատությունից մենք

ԲՅՈՒՐԵՂԱՅՈՒՄ-ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՈՒՐՎԱԳՐԵՐ

Կկարողանանք ուրիշների մեջ բաշխել Նրան՝ որպես այս սրանչելի, բարի զանձի (Ղկ 6:44-45):

III. Այն բանից հետո, եթե Խրայելը վերջ դրեց իր մեղքին՝ Աքարի մեղքին (Հս 7:11-12, 20-21), հաղթանակ տարավ Գայիի հանդեպ (8:1-35), բայց հետո գրառված է, թե ինչպես գարավոնացիները խարեցին Խրայելի զավակներին (9:1-27).

- Ա. Գարավոնացիները խևացիներ էին (Ղխ. 3, 7, 11:18-19)` Քանանի երկրի այն ազգերից մեկը, որին Խրայելը պետք է բնաջնջեր, որովհետև նրանք դիվային էին և ձուլված էին դևերի հետ (Երկ Օր 7:2, 9:4-5, 18:9-14). Գարավոնի բնակիչներն իրենց խորամանկությամբ խարեցին Խրայելին (Հս 9:3-14):
- Բ. Քանի որ նրանք լսել էին, որ Խրայելը պարտության է մատնել Երիքովին ու Գայիին, նրանք ցանկացան խաղաղություն հաստատել և Խրայելի հետ ուստ կապել, որպեսզի Խրայելը նրանց ողջ քողմի. նրանք դուրս եկան որպես թե դեսպաններ և ձևացրին, թե հեռվից են եկել. նրանք Հետուի մոտ Գաղղաղայում եղող բանակը գնացին և ասացին նրան ու Խրայելի նարդկանց. «Մենք հեռու երկրից ենք եկել.... Մենք ձեր ծառաները կլինենք. իինա մեզ հետ ուստ կապեցեք» (Ղխ. 6, 11):
- Գ. Հս 9:14-ը Գրվածքի շատ հզոր հատված է, որը ցույց է տալիս, թե ինչու Խրայելի զավակները խարբեցին, որովհետև վարվեցին իր ամուսնուն մոռացած կմոջ նման. ամբողջ Աստվածաշունչը աստվածային սիրավեա է՝ գրառում այն մասին, թե Աստված ինչպես է սիրահետում Իր ընտրյալ մարդկանց և ի վերջո ամուսնուն նրանց հետ (Ծնդ 2:21-24, Երգ 1:2-4, Եսյ 54:5, 62:5, Երմ 2:2, 3:1, 14, 31:32, Եզկ 16:8, 23:5, Օզս 2:7, 19, Մոք 9:15, Հվի 3:29, Բ Կրթ 11:2, Եփս 5:25-32, Հյու 19:7, 21:2, 9-10, 22:17ա):
5. Խրայելի զավակները խարբեցին, որովհետև վարվեցին իր ամուսնուն մոռացած կմոջ նման. ամբողջ Աստվածաշունչը աստվածային սիրավեա է՝ գրառում այն մասին, թե Աստված ինչպես է սիրահետում Իր ընտրյալ մարդկանց և ի վերջո ամուսնուն նրանց հետ (Ծնդ 2:21-24, Երգ 1:2-4, Եսյ 54:5, 62:5, Երմ 2:2, 3:1, 14, 31:32, Եզկ 16:8, 23:5, Օզս 2:7, 19, Մոք 9:15, Հվի 3:29, Բ Կրթ 11:2, Եփս 5:25-32, Հյու 19:7, 21:2, 9-10, 22:17ա):
6. Աստվածաշունչը ցույց է տալիս, որ մենք՝ որպես Աստծու ընտրյալներ, Նրա կինն ենք, և որ Նրա ու մեր միջն պետք է փոխադարձ սիրո ամուսնական միություն լինի. այսպիսով՝ տիեզերքը «հարսանեկան պալատ» է, վայր, որտեղ Ամուսնուն՝ պատրաստված և ավարտունացած Եռամեկ Աստված, ամուսնությամբ միանում է փրկագնված, վերածնված, սրբացված, նորոգված, փոխակերպված և փառավորված եռամաս մարդու հետ. ի վերջո Աստվածաշունչն ավարտվում է Նոր Երուսաղեմով՝ որպես նոր երկնքում ու նոր երկում Աստծու ընտրյալների վերջնական ավարտունությամբ՝ տիեզերական կնօղով հավիտենապես՝ 21:9-10, 22:17ա:
7. Կինը երբեք չպետք է քողմի իր ամուսնուն. ընդհակառակը, նա պետք է միշտ ապավինի նրան և մեկ լինի նրա հետ. եթե գարավոնացիներն

ՀԵՍՈՒԻ ԳԻՐՔ

Իսրայելի մոտ եկան, Իսրայելը՝ որպես կին, պետք է գնար իր Ամուսնու մոտ և Նրանից ճշտեր, թե ինչ անի՝ Հս 9:14:

4. Որպես հավատացյալներ, որոնք սիրում են Տիրոջն ու ձգտում Նրա հաղորդական հարսի բաղադրիչները լինելու, մենք պետք է Աստծու հետ խորհրդակցենք ամեն խնդրի առնչությամբ, որին բախվում ենք. մենք պետք է ամեն հարց բերենք Տիրոջը և Նրա առջև ու Նրա հետ հաղորդակցության մեջ խորհենք որևէ գործի մասին, քննենք այն և դրա վերաբերյալ որոշում կայացնենք.
 - ա. Այս առումով յուրաքանչյուր հավատացյալ պետք է այն աստիճանի տկար լինի, որ չունենա իր սեփական զաղափարները, չկայացնի իր սեփական որոշումները կամ որևէ գործողություն չձեռնարկի իրեն համարակած բանի առնչությամբ՝ առանց Տիրոջ հետ շփվելու և Նրա հետ խորհրդակցելու՝ բույլ տալով, որ Նա կայացնի անհրաժեշտ որոշումները. սա քրիստոնյայի՝ քաղցրությամբ լեցուն ապրելակերպն է՝ Բ Կրթ 12:9-10:
 - բ. Մենք այլընտրանք չունենք՝ բացի բոլոր բաներում Աստծու հետ հաղորդակցվելուց, բոլոր բաները Նրա հետ քննարկելուց և բույլ տալուց, որ Նա Իր ձեռքը վերցնի բոլոր բաները, խոսի բոլոր բաներում և կայացնի ամեն մի որոշում. փառավոր բան է, երբ քրիստոնյան ամեն պահի և ամեն բանում ուրիշ Մեկից՝ Աստծուց է կախված՝ Փլա 4:6-7, Առկ 3:5-6, Երմ 17:7-8, Բ Կրթ 1:8-9, Առմ 62:8, Աղմ 102, Վերնագիր և խ. 7:
5. Եթե Աստված ձեզ առաջնորդում է ընթանալ մի ճանապարհով, որ ձեզ հայտնի չէ, «աս ձեզ ստիպում է Նրա հետ հարյուրավոր և հազարավոր զրոյցներ ունենալ, ինչի արդյունքը ճամփորդությունն է, որ հավերժական հուշ է դառնում ձեր և Նրա միջև»՝ Վոչման Նի, Երկերի ժողովածու, հս 7:
6. Իսրայելի՝ իր Ամուսնու խորհուրդը չփնտրելու արդյունքում այս անկախ, անհատապաշտական կինը խարվեց և չունեցավ պաշտպանություն, պահպանություն. Գրվածքների այս գրառումից պետք է յուրացնենք, որ որպես Տիրոջ կինը՝ մենք պետք է Նրա հետ միասին ապրենք՝ միշտ ապավիճելով Նրան և անընդհատ մեկ լինելով Նրա հետ. սա Հետուի գրքի 9-րդ գլուխ խորքային նշանակությունն է: